ՀԱՅԿ ԲԺՇԿՅԱՆ (ԳԱՅ)

(Ծննդյան 80-ամյակի առթիվ)

ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Ծ. Պ. ԱՂԱՅԱՆ

Սովետական քաջարի զորավարների և կարմիր բանակի անմահ հերոսների փայլուն համաստեղության մեջ յուրահատուկ տեղ է գրավում նաև հայ ժողովրդի զավակ Գայը՝ Հայկ Բժշկյանը, որի անունը ոսկե տառերով է գրվել մեծ Հոկտեմբերի տարեգրության մեջ։

Հայկ Դմիտրիի Բժշկյանը ծնվել է 1887 թ. փետրվարի 6-ին Թավրիզ քաղաքում։ Նրա հայրը ժողովրդական ուսուցիչ էր, հայ ժողովրդի ազատագրական պայքարի հարցերով մտահոգված հասարակական գործիչ։ Եվ այդ էր պատճառը, որ պատանի Հայկը շատ վաղ հասակից մեծ հետաքրքրություն է հանդես բերում դեպի հայ ժողովրդի բախտը, ջանքեր է գործադրում գտնելու նրա ազատագրության ուղիները։

Հայկը նախնական կրթությունն ստանում է Թավրիզի Բերդաթաղի «Արամյան» 4-դասյան ծխական դպրոցում, որտեղ որպես ուսուցիչ աշխատում էր նրա հայրը։ Այդ տարիների մասին Գայը հետագայում գրել է. «Լավ դաստիարակության շնորհիվ, ես վաղ հասակից սկսեցի իմ հեղափոխական գործունեությունը։ Աշակերտական նստարանից... ես համարվում էի Թավրիզի «Հնչակ» կազմակերպության անդամ և ակտիվ աշխատանք էի տանում աշակերտ երիտասարդության մեջ»[1]։

Հայկի ծնողները 1901 թ. տեղափոխվում են Անդրկովկաս և բնակություն հաստատում Թիֆլիսում։ Նա ուսումը շարունակում է Ներսիսյան դպրոցում, որտեղ ամբողջովին կլանվում է հայ մշակույթի և հասարակական մտքի ուսումնասիրման գործով։ Ներսիսյան դպրոցը, որն այդ տարիներին հայ մշակույթին և առաջավոր մտքին տուն տվող օջախներից մեկն էր, կարևոր նշանակություն ունեցավ Հայկ Բժշկյանի՝ որպես քաղաքական գործչի ձևավորման վրա։ Այստեղ էլ նա կազմակերպում է գաղտնի խմբակներ, դառնալով աշակերտության սիրելին։

1903 թ. պայքար է սկսվում Հնչակյանների ձախ և աջ թևերի միջև։ Հայկը հարում է ձախ թևին։ 1904 թ. նրան, իբրև «խռովարարս աշակերտի, հեռացնում են Ներսիսյան դպրոցից։ Բժշկյանը տեղափոխվում է Բաքու և, աշխատելով նավթահանքերում որպես մեքենա յուղող բանվոր, ակտիվորեն մասնակցում է բանվորական գործադուլներին։ Միաժամանակ նա սկսում է իր գրական-ժուռնալիստական առաջին փորձերը, աշխատակցում Թիֆլիսի, Բաքվի և

---

[1] *Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի կենտրոնական կուսարխիվ (հետագայում ՄԼԻ ԿԿԱԿ), ֆ. 124, ցուց. 1, գ. 429, թ. 13։*

մի շարք այլ վայրերի սոցիալ-դեմոկրատական թերթերին։ Նրա հոդվածները «Բանվոր» և «Բանվոր Հայկ» ստորագրություններով լույս են տեսնում «Բանվոր», «Բանվորի ձայն», «Գաղափար», «Հնչակ» և այլ թերթերում ու ամսագրերում։

Իր հոդվածներում «Բանվոր Հայկը» հայ աշխատավորությանը կոչ էր անում պայքարի երթել ազատության համար։ Սակայն այդ տարիներին նա դեռևս լիովին չէր յուրացրել պրոլետարական պայքարի մարքսիստական մեթոդները և դրա համար էլ նրա բուռն ու ընդվզող բնավորության մեջ երբեմն նկատվում էին հակումներ դեպի տեռորը։ Այսպես, նա մասնակցություն ունեցավ Կովկասի փոխարքա իշխան Գոլիցինի դեմ կազմակերպված մահափորձին։ Սակայն Բաքվի հեղափոխական պայքարի հնոցում Հայը քաղաքական մեծ դպրոց է անցնում։ Նրա հանդիպումները այնպիսի հեղափոխական գործիչների հետ, ինչպիսիք էին Մ. Մելիքյանը, Բ. Կնունյանցը և շատ ուրիշներ, մեծ ազդեցություն են ունենում նրա կյանքի հետագա ընթացքի վրա։

Ռուսական առաջին հեղափոխության բուռն օրերին Հայկ Բժշկյանը Բաքվի բանվորական մասսաների մեջ ակտիվ հեղափոխական աշխատանք է տանում, որը չի վրիպում ցարական ոստիկանության աչքից։ Նա ենթարկվում է հետապնդումների ու հալածանքների։ 1905 թ. վերջերին Հայկին կալանավորում և Բաքվի Բաիլովյան բանտն են նետում, որտեղ նրան վեց ամիս պահելուց հետո ազատ են արձակում։ Բաքվում նա սերտ կապերի մեջ էր ականավոր հեղափոխական գործիչ Սարգիս Կասյանի հետ։

Ռուսական առաջին հեղափոխությունը մեծ ազդեցություն թողեց ողջ երկրի քաղաքական կյանքի և հասարակական մտքի հետագա զարգացման վրա։ Քաղաքական ներքին բախումներն ավելի սրվեցին մի շարք մանր բուրժուական սոցիալիստական կուսակցությունների մեջ, որոնց ձախ թևը սկսեց հարել բոլշևիզմին։ Հենց այդ ժամանակ էլ Բաքվի հնչակյաններից շատերը մտան ՌՍԴԲԿ շարքերը։ Հայկ Բժշկյանը 1906 թ. հնչակյանների 6-րդ կոնֆերանսում ստորագրեց ձախ թևի կազմած արձանագրությունը, որտեղ պահանջ էր դրվում միավորվել ՌՍԴԲԿ հետ[2]։

1907—1909 թթ. Բժշկյանը շարունակում էր հեղափոխական աշխատանք տանել Բաքվի բանվորների մեջ, հատկապես Բալախանիի և Բիբի-Հայբաթի նավթահանքերում։ Այդ տարիներին նա ապրուստի միջոց հայթայթելու նպատակով աշխատում էր Նոբելի ֆիրմայում որպես մեքենաներ յուղող և ապա որպես նավթաքաշ բանվոր։

1910 թ. Ստ. Շահումյանի ղեկավարությամբ, Հայկ Բժշկյանը Բաքվում մեծ աշխատանք տարավ Բալախանիում նավթարդյունաբերության աշխատողների միություն կազմակերպելու ուղղությամբ։ Շուտով նա աչքի ընկավ իր ակտիվ գործունեությամբ և հետապնդվեց ոստիկանության կողմից։ Նոր ձերբակալությունից խուսափելու համար, ընկերների խորհրդով, նա թողեց Բաքուն և տեղափոխվեց Թիֆլիս։ Այստեղ նա սովորում էր Աբրամյանցի հաշվապահական դասընթացներում, որն ավարտելուց հետո, 1911 թ. աշխատում է Սաֆարովի երկաթե իրերի խանութում՝ որպես հաշվետար, միաժամանակ ակտիվորեն մասնակցելով առևտրա-արդյունաբերական աշխատողների միու-

2 Նույն տեղում։

թյան կազմակերպմանը։ Այդ գործունեության համար նա 1911 թ. վերջին նորից ձերբակալվում է, և երկու ամիս տառապում Մեհեքի բանտում։ 1912 թ. Հայկ Բժշկյանը արտաքսվում է Ասորեստան, որտեղ աշխատում է կապիտալիստ Ադամյանի ալրաղացում որպես հաշվապահ։ Այստեղ նա գտնվում էր ոստիկանության հսկողության տակ։ Հաճախ Հայկ Բժշկյանը հանդես էր գալիս ալրաղացի բանվորների շահերի պաշտպանությամբ։

Առաջին համաշխարհային պատերազմի առաջին ամիսներին ցարական կառավարությունը և հատկապես Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը, շարունակելով իրենց երկերեսանի քաղաքականությունը, սկսեցին կեղծ խոստումներ տալ հայ ժողովրդին, թե կլուծեն հայկական հարցը, կազատագրեն Արևմտյան Հայաստանը Թուրքական լծից, կստեղծեն ինքնավար Հայաստան։ Դրա փոխարեն նրանք կոչ էին անում կազմել կամավորական խմբեր և օգնել ցարական բանակին։ Թուրքական լծից արևմտահայությանը ազատելու երազանքը այնքան հրապուրիչ էր, որ հայ հայրենասերները մոռանում են ցարիզ-

մի փարիսեցիական, փոքր ազգերի շահերը ոտնահարող քաղաքականությունը։ Նրանք ձգտում էին օգտագործել ստեղծված միջազգային հարմար առիթը և թեկուզ կյանքի գնով փրկել Թուրքական լծի տակ տառապող հայրենակիցներին։ Ահա այդպիսի բարդ իրադրության պայմաններում հայ ժողովրդի հերոս զավակներից շատերը, հայրենիքի փրկության գործից անմասն չմնալու համար, անդամագրվեցին կամավորական խմբերին։ 1915 թ. հոկտեմբերին այդ պայքարին զինվորագրվեց նաև Հայկ Բժշկյանը, որը հայկական 6-րդ կամավորական ջոկատի հետ մեկնեց ռուս-թուրքական ճակատը։ Իր կենսագրական ակնարկում նա հետագայում հիշատակում է, որ հաճախ էր հանդիպվում հայ կամավորական ջոկատներում գործող դաշնակ խմբապետների հետ՝ չընդունելով նրանց ավանտյուրիստական գործելակերպը[3]։

Ռազմաճակատում Հայկ Բժշկյանը շարունակում էր իր աշխատանքը զինվորների մեջ։ 1915 թ. վերջերին նրան հաջողվում է Ղարսում ստեղծել զինվորական կոմիտե, որը քաղաքական և կազմակերպական աշխատանք էր տանում զորամասերում։

Թուրքերի դեմ մղված մարտերում Հայկ Բժշկյանն աչքի է ընկնում իր մարտական սխրանքներով։ Նա ուշանձնահատուկ խիզախություն է ցուցաբերում Սարիղամիշի ճակատում և Դարյար կոչվող վայրում Թուրքերի դեմ մղված կռիվներում։ Ջոկատի հրամանատար Ավշարովը թեժ մարտում զոհվում է։ Հրամանատարությունն իր վրա է վերցնում Հայկը, և նրա ջոկատը ուժեղ հարվածով թշնամուն ետ է շպրտում։ Հայկը գլխից և ձեռքից վիրավորվում է և ուղարկվում բուժվելու, Ալեքսանդրապոլի զինվորական հիվանդանոցում։ Մարտերում ցույց տված հերոսության համար նա պարգևատրվում է Գեորգիևյան III և IV կարգի խաչով, Գեորգիևյան մեդալով և ս. Աննայի շքանշանով։ Հիվանդանոցից դուրս գալուց հետո Բժշկյանին ուղարկում են Թիֆլիսի հրահանգչական դպրոցը, որտեղ նա ստանում է իր առաջին ռազմական-տեսական գիտելիքները։ Ծանր վերքերը դեռևս չէին բուժվել, և 1916 թ. վերջերին Հայկը մեկնում է Մոսկվա բուժումը շարունակելու։ Շուտով վրա են հասնում Փետրվարյան հեղափոխության բուռն օրերը։ Տապալվում է ցարական ինքնակալությունը։ Հայկ Բժշկյանը Մոսկվայում մասնակցում է ցարիզմի դեմ ուղղված հեղափոխական ելույթներին։ Այնուհետև Բժշկյանը գնում է Սամարղանդ։ Այստեղից նա կապ է պահպանում ՌՍԴԲ(բ)Կ Անդրկասպյան երկրային կոմիտեի հետ։ Նա աշխույժ նամակագրություն ուներ հատկապես երկրային կոմիտեի աշխատող Ահարոնյանի հետ[4]։ Հայկը կապ է հաստատում նաև Թուրքեստանի հեղկոմի հետ, որի հանձնարարությամբ ակտիվ աշխատանք է ծավալում հայ և այլազգի աշխատավորների մեջ։

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո Հայկ Բժշկյանն իր ամբողջ էությամբ, անձնուրաց կերպով նվիրվեց սոցիալիստական հեղափոխությունը պաշտպանելու պատմական մեծ պայքարին։ Այդ ժամանակից սկսած մենք Հայկ Բժշկյանին տեսնում ենք քաղաքացիական կռիվների ամենաթեժ մարտերում։ Նա հեռագիր է ստանում հեղափոխական գործիչ Կոլեսովից, որ Բուխարայի հակահեղափոխական ուժերը գրոհի են պատրաստվում սովետա-

3 Նույն տեղում, էջ. 15—16։
4 Նույն տեղում, էջ. 15։

ղան իշխանության դեմ, որ հարկավոր է սանձել Թշնամուն, Հայկ Բժշկյանը եռանդուն գործունեություն ծավալեց՝ կատարելու այդ առաջադրանքը։ Շուտով նա հայ, ուգրեկ և հրեա աշխատավորներից կազմավորեց ինտերնացիոնալ ջոկատ և Սամարղանդի հեղկոմի հրահանգով մարտի գնաց Բուխարայի էմիրի դեմ։ Միանալով Կոլեսովի միավորմանը, Կագան երկաթուղային կայարանի մոտ Հայկ Բժշկյանը Թշնամուն ջախջախիչ հարված հասցրեց։ Ինտերնացիոնալ ջոկատի կազմում կռվում էր նաև Հայկի հայրը՝ Դմիտրի Կարապետովիչը։ Մի շարք ուրիշ մարտերում էլ ջոկատը փայլուն հաղթանակներ տարավ։ Խոսելով այդ մասին, Հայկ Բժշկյանը գրել է. «Կովկասյան ֆրոնտում և Թիֆլիսի հրահանգչական դպրոցում իմ ձեռք բերած ռազմական համեստ գիտելիքները իզուր չանցան»[1]։

1918 Թ. ապրիլին Հայկ Բժշկյանը Սամարայում կազմակերպում է կարմիրգվարդիական և կուսակցական դրուժիններ։ Սպիտակ չեխերն ու նրանց միացած հակասովետական ուժերը մեծ վտանգ էին ստեղծել սովետական իշխանության համար։ Պետք էր բոլոր ուժերով պաշտպանել Սամարա—Սիզրան և Սիմբիրսկ գիծը, ջախջախել ու ետ շպրտել Թշնամու ուժերը։ Սիմբիրսկի նահանգային գործկոմի և հեղկոմի հանձնարարությամբ նա միավորեց առանձին զորաջոկատները և ուժեղ գրոհի անցավ սպիտակ չեխերի դեմ, որոնք գրավել էին Սամարան- Վոլգայի ափին, Սենգիլեյան տեղամասում Հայկ Բժշկյանի՝ Դայի զորամասը չեխերի գերակշռող ուժերի շրջապատման մեջ ընկավ։ Սամարայի նահանգային հեղկոմի նախագահ Վ. Կույբիշևը և I հեղափոխական բանակի հրամանատար Մ. Տուխաչևսկին կորցնելով կապը և բավական ժամանակ տեղեկություն չստանալով Դայից, այն համոզմանն էին եկել, թե նրա զորամասը ոչնչացվել է Թշնամու մի քանի անգամ գերակշռող ուժերի կողմից։ Սակայն հմուտ զորավարը կարողացավ ուժերը համախմբել և, պատռելով Թշնամու օղակը, դուրս գալ շրջապատումից։

Դայի հերոս մարտիկներից 1918 Թ. հուլիսին ձևավորվեց առաջին կանոնավոր հրաձգային դիվիզիան, որն իր մեջ առավ I և II սիմբիրսկյան գնդերը և կոչվեց Սիմբիրսկյան I, իսկ հետագայում՝ 24-րդ Երկաթյա դիվիզիա։ Դայի հրամանատարությամբ այդ դիվիզիան Միջին Վոլգան մաքրեց սպիտակ չեխերից, Կոլչակի և Դուտովի բանդաներից, ազատագրեց Սիմբիրսկ, Սիզրան, Բուգուրուսլան, Օրենբուրգ, Ուրալսկ, Օրսկ, Ակտյուբինսկ քաղաքները և օգնեց բանակի մյուս զորամասերին՝ գրավելու Սամարան և Ուֆան։

1918 Թ. օգոստոսի վերջերին, մարտական գործողությունների թեժ պահին լուր ստացվեց, որ Թշնամու գնդակից վիրավորվել է ժողովուրդների մեծ առաջնորդ Վ. Ի. Լենինը։ Վ. Կույբիշևը, Մ. Տուխաչևսկին և Դայը, ստանալով այդ ծանր լուրը, անհապաղ 1 բանակի զորամասերում բողոքի ցույց են գումարում և իրենց զայրույթը արտահայտում։ Կարմիրբանակայինները և հրամանատարները երդվում են կրկնապատկել իրենց ուժերը և անհապաղ սպիտակներից ազատագրել Սիմբիրսկը՝ Իլյիչի ծննդավայրը, որտեղ Թշնամին մեծ ուժեր էր կենտրոնացրել։ Առաջին հեղափոխական բանակի առաջատար ուժերը սրընթաց հարձակման են անցնում Սիմբիրսկի ուղղությամբ։ Այդ բանա-

---

[1] Նույն տեղում, Թ. 16։

կի կազմում 24-րդ Երկաթյա դիվիզիան Գայի գլխավորությամբ մարտի մեջ է մտնում սեպտեմբերի 8-ին։ Հաջորդ օրը, սեպտեմբերի 9-ի լուսաբացին Երկաթյա դիվիզիան, կոտրելով թշնամու դիմադրությունը, առաջ է անցնում։ Թշնամին մեծ կորուստներ տալով փախուստի է դիմում։

Գայի դիվիզիան ընդհուպ մոտենում է Սիմբիրսկին և նրեք կողմից օղակում քաղաքը։ Սիմբիրսկը պաշտպանելու համար կենտրոնացված կոլչակյան զորքերը կատաղի դիմադրություն էին ցույց տալիս։ Սեպտեմբերի 11-ին հարձակողական մարտերն ավելի են ուժեղանում։ Կարմիրբանակայինները մեծ ներշնչանքով ու անհողդողդ հավատով էին մարտնչում, իմանալով, որ անպայման կպատագրեն մեծ առաջնորդ Վլադիմիր Իլյիչի ծննդավայրը։ Նրանց ոգեշնչում էր իրենց հրամանատարի՝ Գայի անձնուրաց գործունեությունը, որը սուրբ մերկացրած մի տեղամասից մյուսն էր նետվում և ոգևորում զինվորներին։ Սպիտակները կռվում էին մոլեգին, սակայն անսասան էր Գայի Երկաթյա դիվիզիան։

Սեպտեմբերի 12-ի լուսադեմին Գայի զորամասերը վերսկսեցին փոթորկալի հարձակումը։ Առաջինը Մ. Վելիկանովի և Ն. Շվերնիկի գունդը սրընթաց հարվածով ընկճեց թշնամու դիմադրությունը և գրավեց քաղաքի հարավային արվարձանը։ Արևելքից հուժկու հարվածով քաղաք ներխուժեց Սեդյակովի գլխավորած I Կուրսկյան գունդը։ Ինտերնացիոնալ գունդը, որի հրամանատարն էր հունգարացի կոմունիստ Դյուլա Վարգան, գրավեց երկաթուղային կայարանը։ Ժամը 12 անց 30 րոպեին քաղաքն արդեն Երկաթյա դիվիզիայի ձեռքին էր։ Այդպիսի սրընթաց հարվածը թշնամու համար անսպասելի էր։ Կարմիր բանակի ձեռքն անցավ մեծ ռազմավար՝ ինքնաթիռներ, թնդանոթներ ու գնդացիրներ, ինչպես նաև բազմաթիվ գերիներ։ Սիմբիրսկի գրավումը, թշնամու գերակշռող ուժերի ջախջախումը հաղթանակի նոր ուժ ու եռանդ ներշնչեցին կարմիր բանակի հերոս մարտիկներին։ Առաջին բանակի բոլոր զորամասերում մեծ ցնծություն էր տիրում։ Կոլչակի լծից ազատագրված աշխատավորները ամենուրեք մեծագույն ուրախությամբ էին դիմավորում ազատարար կարմիր բանակին։

Նույն օրը Մոսկվա՝ Վ. Ի. Լենինին է հաղորդվում Գայի հետևյալ հեռագիրը.

«Թանկագին Վլադիմիր Իլյիչ։ Ձեր հարազատ քաղաքի գրավումը՝ դա Ձեր մի վերքի պատասխանն է, իսկ մյուս վերքի պատասխանը կլինի Սամարան»։

Դժվար է պատկերացնել, թե ինչպիսի ուրախալի լուր էր դա Իլյիչի համար և ինչ ապաքինող ուժ ուներ։ Այդ երևում է հենց Վլադիմիր Իլյիչ Լենինի 24-րդ Երկաթյա դիվիզիային ուղարկած պատասխան հեռագրից.

«Սիմբիրսկի՝ իմ հայրենի քաղաքի գրավումն ամենաբուժիչ, ամենալավ վիրակապն է իմ վերքերի վրա։ Ես չտեսնված կայտառություն և ուժ եմ զգում։ Շնորհավորում եմ կարմիրբանակայիններին հաղթանակի առթիվ և բոլոր աշխատավորների անունից շնորհակալություն եմ հայտնում նրանց բոլոր զոհողությունների համար»[6]։

Սեպտեմբերի 28-ին Սիմբիրսկում, երկաթուղու կայարանի հրապարակում, մեծ խանդավառությամբ անցավ Երկաթյա դիվիզիայի զորահանդեսը։

---

6 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 28, էջ 102։

Ռազմաճակատի ռազմա-հեղափոխական խորհրդի անդամ Պ. Կորոգևն հրապարակում է համառուսական Կենտգործկոմի նախագահ Յա. Սվերդլովի շնորհավորական հեռագիրը։ Դիվիզիան պարգևատրվում է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով։

Երկաթյա դիվիզիայի և նրա հրամանատար Գայի փառքը Արևելյան ռազմաճակատից դուրս է գալիս և տարածվում ամբողջ երկրում և արտասահմանյան բարեկամների շրջանում։ Ժամանակի մամուլը Երկաթյա դիվիզիայի և նրա հրամանատարի անունն անմահացնող շատ սրտառուչ էջեր է գրել։

Սիմբիրսկի ազատագրումից հետո Գայը գլխավոր հրամանատարությունից նոր առաջադրանք է ստանում. «Անհապաղ հարձակում սկսել Սիզրանի ու Սամարայի վրա, երկու-երեք օրում գրավել այդ քաղաքները, հետո եռանդուն կերպով հարձակումը շարունակել դեպի Արևելք»։

Երկաթյա դիվիզիան շարունակում է մեծ Հոկտեմբերի հաղթանակների պաշտպանության իր պատմական միսիան։ Թշնամու դեմ մղվող մարտերը հետզհետե ավելի ու ավելի լայն ծավալ են ստանում։ Գայի զորամասերը օրըստօրե ավելի են զորեղանում և անպարտելի դառնում։ Դիվիզիան արդեն ուներ մոտ 5 հազար հրաձիգ, 117 գնդացիր, 21 հրանոթ, մի քանի ինքնաթիռ, բազմաթիվ ավտոմեքենաներ և ռազմական այլ տեխնիկա։

Սիզրանի ուղղությամբ մղած մարտերում թշնամին շարունակում էր կատաղի դիմադրություն ցույց տալ։ Գայը մտածում էր խնայել ուժերը և քաղաքը գրավել քիչ կորուստների գնով։ Այդ նպատակով նա թշնամուց խլված ինքնաթիռով անձամբ հետախուզություն է կատարում։ Պարզելով թշնամու զորքերի դասավորությունը, նա փոխում է հարձակման նախնական պլանը և ճակատային գրոհի փոխարեն որոշում է Սիզրանը գրավել շրջանցումով։ Այդ մանևրը կատարվում է շատ արագ և թշնամու համար անսպասելի։ Թշնամին, գլուխը կորցրած, պայթեցնում է Վոլգայի կամուրջի կամարներից մեկը և պատրաստվում փախուստի։ Բայց արդեն որոշված էր թշնամու բախտը։ Երկաթյա դիվիզիայի ավտոնդարդային ջոկատները Գայի գլխավորությամբ սրընթաց հարվածով հոկտեմբերի 3-ին մտնում են Սիզրան։ Սպիտակգվարդիականներն ու ինտերվենտները մեծ զոհեր տալով փախչում են դեպի Սամարա։

Կատաղի մարտեր են բորբոքվում Սամարայի մատույցներում։ Երեք օր տևող համառ մարտերից հետո, 1918 թ. հոկտեմբերի 7-ի երեկոյան, բանակի զորամասերը կոտրում են թշնամու դիմադրությունը և մտնում քաղաք։ Առաջինը քաղաք են մտնում 24-րդ Երկաթյա դիվիզիայի գնդերը։ Գայը նշանակվում է քաղաքի կայազորի պետ։

Հսկայական է Երկաթյա դիվիզիայի ավանդը Կոլչակի ջախջախման գործում։ Միայն 1918 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին դիվիզիան Սիմբիրսկից հասել է Բուգուրուսլան, դժվարին պայմաններում կտրելով ավելի քան 800 կիլոմետր տարածություն։ Իր մարտական սխրագործությունների համար Գայի դիվիզիան պարգևատրվում է Կարմիր դրոշի շքանշանով և երկու մարտական դրոշով։ Դիվիզիան ստացել է նաև ՀամԿԳԿ-ի 10 Պատվո կարմիր դրոշ, Սիմբիրսկի և Սամարայի նահանգային գործադիր կոմիտեներից 20 դրոշ։ Նրա 1000-ից ավելի մարտիկներ, հրամանատարներ և քաղաշխատողներ պարգևատրվել են Կարմիր դրոշի շքանշանով։

1918 թ. նոյեմբերին սպիտակգվարդիականները մեծ ուժեր են կենտրոնացնում Հարավային ռազմաճակատում և լուրջ սպառնալիք են ստեղծում Մոսկվայի համար։ Այդ ճակատն է ուղարկվում ականավոր զորավար, I բանակի հրամանատար Մ. Տուխաչևսկին, որպես Հարավային ռազմաճակատի հրամանատարի օգնական։ Գայը Տուխաչևսկու առաջարկությամբ 1918 թ. դեկտեմբերի 1-ին նշանակվում է I հեղափոխական բանակի հրամանատար։ Գայի գլխավորած բանակը ակտիվ մասնակցություն է ունենում Ուրալի հարավային շրջանների և Բուգուրուսլան, Բուգուլուկ, Օրենբուրգ, Ուֆա, Օրսկ և այլ քաղաքների ազատագրման գործին։

1919 թ. թշնամին մեծ ուժեր է կենտրոնացնում Հարավային ռազմաճակատում։ Դենիկինյան սպիտակգվարդիական զորքերը, ինտերվենտների օգնությամբ, հարձակում են սկսում Մոսկվայի վրա։ Կարմիր բանակը Մոսկվայի պաշտպանության ճակատն է ուղարկում իր լավագույն ուժերին։ Այդ մարտերից չէր կարող հեռու մնալ նաև Գայը։ Եվ ահա 1919 թ. հուլիսի վերջին մենք նրան տեսնում ենք Հարավային ռազմաճակատի առաջավոր գծում։ «Իմ ցանկությամբ,— գրել է Գայը,— ես ուղարկվեցի Հարավային ֆրոնտի ռազմա-հեղափոխական խորհրդի տրամադրության տակ»[7]։ Գայն անմիջապես նշանակվեց 42-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, որն իր մարտական գործողությունները սկսեց սպիտակների ամրացրած Կորոչա և Բելգորոդ քաղաքների ուղղությամբ։ Գայի դիվիզիան սրընթաց հարվածով փախուստի մատնեց թշնամու գերակշռող ուժերը և գրավեց կարևոր պլացդարմ հանդիսացող Կորոչա քաղաքը։ Ահա թե ինչպես է գնահատված այդ հաղթանակը 13-րդ բանակի ռազմա-հեղափոխական խորհրդի՝ Գային ուղարկված հեռագրում. «Ռազմա-հեղափոխական խորհուրդը ողջունում է նոր հրամանատարին և նրա դիվիզիայի հաջողությունները, ու հաստատ համոզված է, որ սկսված հերոսական հարձակումը մարտական հրամանի նման օրինակելի և ճշգրիտ իրագործելու դեպքում կավարտվի լիակատար հաղթանակով թշնամու հանդեպ»[8]։

Հաջորդ հարվածով ազատագրվեց Նովի Օսկոլ քաղաքը։ «13-րդ բանակի ռազմա-հեղափոխական խորհուրդը նորից է ողջունում հերոս դիվիզիային և նրա համարձակ հրամանատարին, երկրորդ քաղաքի գրավումով,— կարդում ենք հաջորդ հեռագրում. Հերթը Բելգորոդինն է, և մենք համոզված ենք, որ ոչ ուշ, քան վաղը կլինենք այնտեղ և մեզ համար լավ ընդունելությունն կկազմակերպենք»[9]։ Շուտով ազատագրվեց նաև Բելգորոդը։ Դենիկինյան ընտիր զորքերը ջախջախվեցին, Մոսկվայի վրա կախված վտանգը վերացվեց։ Թշնամու ուժերը կենտրոնացան Հյուսիսային Կովկասի, Կերչ-Ազովյան և Ղրիմի ուղղություններում։

Գայը կանչվեց Մոսկվա և Հանրապետության Ռազմա-Հեղափոխական Խորհրդից նոր առաջադրանք ստացավ. շտապ կերպով թիկունքի և ուրիշ ճակատների կովկասցիներից ձևավորել Կովկասյան հեծելազորային I դիվիզիան։ Մոտ մեկ և կես ամսվա ընթացքում Սարանսկ քաղաքում Գայը կազմակերպեց այդ անպարտելի դիվիզիան և 1919 թ. սեպտեմբերի վերջերին մեկնեց Հարավ-

[7] ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 124, ցուց. 1, գ. 429, թ. 4։
[8] Նույն տեղում, թ. 7։
[9] Նույն տեղում, թ. 7։

արևելյան ռազմաճակատ։ Դայի հեծելազորային դիվիզիան Կովկասյան ճակատի X բանակի կազմում մասնակցեց բոլոր մարտերին և աչքի ընկավ իր անձնուրաց մարտական գործողություններով։ Հատկապես անհրաժեշտ է նշել այն խոշոր մարտերը, երբ գլխովին ջախջախվեցին Թշնամու հավաքական դիվիզիան, I գծային և IV հավաքական-կարարդինյան դնդերը, վերցվեց 2500 գերի, գրավվեց մեծ քանակությամբ ռազմամթերք, հանդերձանք, դրոշակներ, ինչպես նաև գրավվեց Վելիկոկնյաժեսկայա կայարանը՝ Մանիչ գետի ափին։ Այդ մարտերի ընթացքում Դայի գլխավորած դիվիզիան ոչ քիչ դժվարություններ է հաղթահարել։ Զմռանը, 30° ցրտի պայմաններում, Մանիչ գետը անցնելիս IX բանակի ձախ թևի նահանջի պատճառով դիվիզիան ընկնում է ծանր պայմանների մեջ. նրա վրա կատաղի հարձակում են սկսում գեներալներ Պավլովի և Մամոնտովի I և IV հեծյալ կորպուսները։ Դայի դիվիզիան պաշարվում է բոլոր կողմերից, սակայն, ինչպես միշտ, այնպես էլ այս անգամ Դայը, ցուցաբերելով իր զորավարական մեծ տաղանդը, հաջող մաներ է կատարում և ազատելով Թշնամու գերակշռող ուժերի օղակը, դուրս է գալիս պաշարումից, պահպանելով դիվիզիայի մարտունակությունն ու ռազմական ուժերը։

Դայը 1920 թ. փետրվարին ստանում է X բանակի հրամանատարության նոր հրաման՝ գրոհել Սգորլիցկայա կայարանի վրա, որտեղ կենտրոնացած էին գեներալ Պավլովի I և IV կորպուսները։ Այդ ահեղ մարտերում Դայի դիվիզիան խոշոր հաղթանակ տարավ։ Այդ հարվածը դենիկինյան զորքերի համար բախտորոշ նշանակություն ունեցավ։ Մարտում աջ ձեռքից ծանր վիրավորված Դայը շարունակեց մնալ իր դիրքերում։

Վիրավոր վիճակում, ձեռքի դաստակի ոսկորները փշրված, Դայը 1920 թ. փետրվարի 26-ին Կովկասյան ռազմաճակատից նոր հրաման է ստանում՝ կազմավորել կովկասյան II հեծյալ կորպուսը, որի մեջ մտան կովկասյան հեծյալ դիվիզիան, Բլինովի անվան II հեծյալ դիվիզիան, XII հեծյալ և Դոնի դիվիզիաները։ Նույն թվականի ապրիլի 16-ին Դային նոր, դժվարին տեղամաս է հանձնարարվում։ Դենիկինի ջախջախված ուժերը քաշվել էին Ղրիմ և տեղական Թշնամական միավորումների հետ զգալի վտանգ էին ներկայացնում։ Դայը նշանակվում է Ղրիմի Թերակղզու դեսանտային ուժերի հրամանատար, նրա տրամադրության տակ են դրվում Ազով-Դոնի նավատորմիղը և Թամանյան Թերակղզու կամաքային զորքերը։ Կարճ ժամանակում Դայը հսկայական աշխատանք կատարեց։ Նա Թամանյան Թերակղզում կազմեց հատուկ նավատորմիղ՝ Ղրիմի Թերակղզում դեսանտային գործողություններ անցկացնելու համար. Ղրիմում կարմիր բանակը Թշնամուն մահացու հարվածներ հասցրեց։

Սակայն սովետական հայրենիքի վրա նոր վտանգ էր կախվել։ Արևմտյան ռազմաճակատից սպիտակ լեհերը ուժեղ հարձակում սկսեցին Սովետական Ռուսաստանի դեմ։ Պիլսուդսկու գլխավորած լեհական բանակը գրավեց Սովետական Բելոռուսիան և Ուկրաինայի մի մասը և հասավ Կիև, նպատակ ունենալով գրավել Մոսկվան ու տապալել սովետական իշխանությունը։ Լեհերի հարձակումը ետ շպրտելու համար ստեղծվեց երկու ռազմաճակատ՝ Արևմտյան (Բելոռուսիայում)՝ Մ. Տուխաչևսկու հրամանատարությամբ, և Հարավ-արևմտյան (Ուկրաինայում)՝ Ա. Եգորովի հրամանատարությամբ։ ՌԿ(բ)Կ Կենտրոնական կոմիտեն 1920 թ. մայիսի 23-ին հրապարակած «Լեհական ռազմաճակատը և մեր խնդիրները» թեզիսներում կոչ էր անում մոբիլիզացնել ուժերը

Թշնամուն հետ շպրտելու համար։ Ապրիլի 28-ին Արևմտյան ռազմաճակատի զորքերի գլխավոր հրամանատար նշանակվեց մարտերում ճանաչված զորավար Մ. Տուխաչևսկին, շտաբի պետ՝ Ն. Ն. Շվարցը, ռազմաճակատի քաղաքական բաժնի պետ՝ Ալ. Մյասնիկյանը։

Գայը, զգալով, որ իր տեղը այնտեղ է, ուր հայրենիքին առավել մեծ վտանգ է սպառնում, հեռագրում է Արևմտյան ռազմաճակատի հրամանատար Մ. Տուխաչևսկուն, պատրաստակամություն հայտնելով մասնակցելու սպիտակ լեհերի ջախջախմանը։ «Թանկագին Գայ,— պատասխանում է նրան Մ. Տուխաչևսկին.— կորպուսի շտաբի փոխադրումը Արևմտյան ռազմաճակատ լուծված է դրականորեն։ Արագորեն պատրաստվիր։ Միասին խփելու ենք լեհական շլյախտային։ Քո Տուխաչևսկի»։

Հերոսական մարտերի առաջին շարքերում էր III հեծյալ կորպուսը, որը Արևմտյան Դվինսկի շրջանում ձեղքում է լեհերի ճակատը և սրընթաց հարվածով ջախջախում թշնամու համառ դիմադրությունը։ Հաջող մաններով կորպուսը անցնում է թշնամու թիկունքը և գրավում Դուշկա-Սվենցյանի-Նովո-Սվենցյանի ամրացված գիծը, որը և կանխորոշեց ռազմական գործողությունների հաջողությունը Բելոռուսիայում։ Ահեղ մարտերում Գայի գլխավորած III հեծյալ կորպուսը գրավում է մի շարք քաղաքներ ու ամրոցներ, որոնց թվում՝ Վիլնո, Գրոդնո, Լոմժա, Օսովեց, Յեխանով, Պոլոցկ և այլ քաղաքներ։

1920 թ. օգոստոսի 15-ին Գայի կորպուսը Նեշավա-Բոբրույնիկի շրջանում անցնում է Վիսլա գետը, շարժվելով դեպի Վարշավա։

Հակառակորդի ուժերի դեմ արյունահեղ մարտեր մղելով, Գայի կորպուսը առաջ անցավ, սակայն կտրվելով կարմիր բանակի զորամասերից, սկսեց գործել ինքնուրույնաբար։ Օգոստոսի 25-ի առավոտյան Գայի զորքերը Միշինցի մոտ ձեղքում են լեհական IV բանակի ճակատը, իսկ օգոստոսի 26-ին Կովնոյի մոտ վերջին արյունահեղ մարտը տալով լեհական I և III բանակների դեմ, Գայի զորքերը զգալի կորուստներ ունեցան։ Գայի զորամասը ստիպված է լինում անցնել Գերմանիայի սահմանը, հրամայելով այրել ռադիոն և օպերատիվ փաստաթղթերը։ «1920 թ. օգոստոսի 26-ի լուսադեմին,— գրում է Գայը «Գերմանական ճամբարում» գրքում,— ցավոք սրտի, շատերը արցունքն աչքերին, բայց կազմակերպված, դրոշները պարզած, «Ինտերնացիոնալ» երգելով, թշնամու սպանիչ կրակի տակ, մենք անցանք սահմանը, մեզ հետ Գերմանիա տանելով 600 վիրավոր կարմիրբանակային, 2000 գերի և 11 լեհական հրանոթ... Լեհական բանակի սարսափը, Կարմիր Արևմտյան ռազմաճակատի մարտական ավանգարդ III հեծյալ կորպուսը դադարեց գոյություն ունենալուց»։ Գերմանիայի տերիտորիայում, ծանր պայմաններում Գայը մնաց սովետական հերոս զորավարի բարձրության վրա. նա կազմակերպեց հատուկ պարետություն և ձեռք առավ բոլոր միջոցները՝ կարմիր զինվորների բարոյական կերպարը բարձր պահելու համար։ Դիվանագիտական բանակցությունների միջոցով 1920 թ. աշնանը III կորպուսը հայրենիք վերադարձավ Էստոնիայի վրայով։

Գայի գլխավորած զորամասերի հերոսական գործողությունների ու հայրենիքին մատուցած մեծ ծառայությունների մասին Սովետական Միության մարշալ Գ. Կ. Ժուկովը գրել է. «Զինված պայքարի առաջին օրերից Գայ Դմիտրիևիչը իրեն դրսևորեց որպես քաջ, խիզախ և տաղանդավոր հրամանատար, որի կազմակերպչական և մարտական հատկությունները բազմիցս նշվե-

ցին կարմիր բանակի գլխավոր հրամանատարության և սովետական կառավարության կողմից։ Նրա փայլուն հատկությունները հատկապես վառ կերպով երևան եկան, երբ Գայը Սիմբիրսկյան 24-րդ Երկաթյա դիվիզիայի, Արևելյան ռազմաճակատի առաջին բանակի և Արևմտյան ռազմաճակատի III հեծյալ կորպուսի հրամանատարն էր։ Հ. Դ. Գայի հրամանատարության տակ գտնվող զորքերի գործողությունները կարող են անվանվել պատմական, լեգենդար գործողություններ»[10]։

Սովետական Միության մարշալ, ականավոր զորավար Ս. Բուդյոննին Գայի մասին գրել է. «Մարտերում Գայը իրեն դրսևորեց ոչ միայն որպես տաղանդավոր զորահրամանատար և հմուտ կազմակերպիչ, այլ նաև ցուցաբերեց անձնական հերոսություն ու խիզախություն, որի համար նրան բարձր էին գնահատում և անչափ սիրում զինվորները»[11]։

1920 թ. դեկտեմբերին Գերմանիայից վերադառնալուց հետո Գայը ընդունվում է ԲԳԿԲ ռազմական ակադեմիան։ 1922 թ. նա հաջողությամբ ավարտում է ակադեմիայի ավագ հրամկազմի դասընթացները. Ակադեմիայում էլ նա գրեց իր առաջին աշխատությունը՝ «Բակիչի IV կորպուսի ջախջախումը», որը լույս տեսավ «Ռևոլյուցիա ի վոյնա» ամսագրի 1920 թ. երեք համարներում։ Ռազմապատմական բնույթի այդ աշխատությունը շատ արժեքավոր գործ է։

1922 թ. օգոստոսի 2-ին Գայը նշանակվում է II հեծյալ դիվիզիայի հրամանատար, իսկ նույն թվականի հոկտեմբերի 17-ին ՀՍՍՀ Կենտգործկոմի որոշմամբ նշանակվում է Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Ռազմական գործերի ժողովրդական կոմիսար։ Միաժամանակ նա նշանակվում է XII հրաձգային կորպուսի հրամանատար, որի կազմի մեջ մտնում էին XX հրաձգային և III հայկական դիվիզիաները։ Նույն թվականի դեկտեմբերի 7-ին Գային է հանձնվում նաև ՀՍՍՀ հատուկ նշանակման զորամասերի հրամանատարությունը։ Հայաստանում նա ակտիվ հասարակական և կուսակցական աշխատանք էր տանում, Անդրկովկասյան Ֆեդերացիայի և ՀՍՍՀ Կենտգործկոմների անդամ էր։ Գայը մեծ աշխատանք է տանում հանրապետության զինվորական կադրերի պատրաստման և դաստիարակման, կարմիր բանակի շարքերի ամրապնդման ուղղությամբ։ Նա իր հոդվածներից մեկում այդ մասին գրել է. «Ես համոզված եմ, որ առայժմ մեր փոքրիկ Հայաստանի կարմիր բանակը, շնորհիվ ընկերների աջակցության և բանվոր ու գյուղացի դասակարգի բարյացակամ վերաբերմունքի, շուտով կդառնա այն ավանգարդը, որը ցանկալի է Ռուսաստանի պրոլետարիատի համար։ Մեզ հարկավոր է մեր սեփական հրամկազմը, որ գիտակցի մեր իդեալները, որի սրտում միշտ հնչեն ոչ թե զանազան ազգային հովեր կամ նպատակներ, այլ այն, որ նա հանդիսանա կարմիր զինվորի մեծ եղբայրը, որը նրան պիտի առաջնորդի դեպի մարդկություն, հանուն ընդհանուր եղբայրության, հավասարության և բոլոր ազգերի բանվոր և գյուղացի դասակարգի ազատագրման»[12]։

1923 թ. հունվարին Գայը ետ է կանչվում Մոսկվա և նույն թվականի մայիսին նշանակվում է սամարյան VII հեծյալ դիվիզիայի հրամանատար։

---

10 «Սովետական Հայաստան», 7 փետրվարի 1967 թ.։

11 Տե՛ս ՄԱԻ հայկական ֆիլիալում պահվող՝ Ս. Բուդյոննու հուշերը Գայի մասին։

12 «Խորհրդային Հայաստան», 31 դեկտեմբերի 1922 թ.։

1923 թ. դեկտեմբերից մինչև 1924 թ. ապրիլը Գայը գլխավորում էր Արևմտյան ճակատի ռազմական շինարարության և հնձյալ զորամասերի տեղավորման աշխատանքները։

1924 թ. հոկտեմբերից Գայը նշանակվում է III հնձյալ կորպուսի հրամանատար, որտեղ աշխատում է մինչև 1925 թ. հունվար ամիսը և ապա ՍՍՀՄ ՌՀԽ-ի հրամանով ազատվում է այդ պաշտոնից ու որոշ ժամանակ մնում է հատուկ հանձնարարության պահեստային զորամասերում։ 1925 թ. հունիսից Գայը ԲԳԿԲ ռազմական ակադեմիայի II կուրսի ուսանող էր։ 1927 թ. հուլիսին նա ավարտեց Մ. Վ. Ֆրունզեի անվան ակադեմիան և նշանակվեց այդ նույն ակադեմիայի դասախոս՝ ադյունկտի կոչումով[13]։

Ակադեմիայում Գայը շուտով փայլեց իր ռազմական բազմակողմանի գիտելիքներով։ Լինելով ակադեմիայի պրոֆեսոր, նա խոշոր դեր խաղաց սովետական բանակի հրամանատարական կազմի տեսական կոփման և դաստիարակման գործում։

Գայը երկար տարիներ Ժուկովսկու անվան ռազմա-օդային ակադեմիայի քաղաքացիական պատերազմի պատմության ամբիոնի վարիչն էր, որտեղ և նրան շնորհվում է պրոֆեսորի կոչում։

Գայը մի շարք աշխատությունների հեղինակ է։ Ռուսերեն նա հրատարակել է «Դեպի Վարշավա», «Առաջին հարվածը Կոլչակին», «Պայքար չեխոսլովակների դեմ Միջին Վոլգայում», «Գերմանական ճամբարում», «Ռուս-ճապոնական պատերազմը», «Գերմանական գերության մեջ», «1914—1918 թթ. իմպերիալիստական պատերազմը», իսկ հայերեն՝ «Կարմիր բանակի մասին», «Գետանց», «Տասներկու տարի առաջ» և ուրիշ աշխատություններ ու բազմաթիվ հոդվածներ։

Գայը նաև ականավոր հասարակական ու քաղաքական գործիչ էր։ Պատահական չէ, որ անձնական քարտում նա իրեն համարում է պրոֆեսիոնալ կուսակցական[14]։ Նա 1918—1919 թթ. եղել է Սիմբիրսկի, Սամարայի և Օրենբուրգի հեղկոմների անդամ, Սամարայի նահանգական գործադիր կոմիտեի նախագահության անդամ, 1919—1921 թթ. մասնակցել է Սովետների համառուսաստանյան համագումարներին և կուսակցական համագումարներին։ 1922—1925 թթ. նա եղել է Բելոռուսիայի, Հայաստանի և Անդրֆեդերացիայի կենտգործկոմների անդամ, Մինսկի և Երևանի քաղաքային սովետների դեպուտատ։ Գայը Մոսկվայի, Ուլյանովսկի, Կույբիշևի, Սամարայի կարմիրգվարդիական պարտիզանների ընկերության և Մոսկվայի հին բոլշևիկ մարքսիստ-պատմաբանների ընկերության անդամ էր։ Մանածագործների, շինարարների և այլ արհմիություններ Գային ընտրել էին փրենց միության պատվավոր անդամ։

Աշխատավորները երբեք չէին մոռանում հերոս Գային, մեր մեծ երկրի բազմաթիվ քաղաքների ու շրջանների ազատարարին. 1928 թ. Ուլյանովսկի ազատագրման 10-ամյակին Գայը ստանում է բազմաթիվ շնորհավորանքներ և նվերներ։ Այդ մասին Գայը իր ծառայության մատյանում նշում է, որ ստացել է «շատ նվերներ Ուլյանովսկ քաղաքի պրոլետարիատից»։ Ուլյանովսկի

---

13 Տե՛ս ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 124, ցուց. 1, գ. 429, թ. 5։

14 Գայը ՌԿ(բ)Կ մեջ է մտել 1918 թ., սակայն հատուկ որոշմամբ նրա կուսակցական ստաժը համարվել է 1903 թ.։

նահանգական գործկոմը իմանալով, որ Գայը, որպես վարժ հեծյալ, սիրում է «իարշավել, նրան նվեր է ուղարկել մի երիվար՝ իր հանդերձանքով[15]։

Շատ հմայիչ էր Գայի կերպարը որպես քաջության ու համեստության կատարյալ տիպար։ Գայի բնավորության այդ գծերն է առանձնահատուկ կերպով նշել Սովետական Միության մարշալ Ի. Ք. Բաղրամյանը. «Գայը քաջ էր, — գրում է նա, — ուներ բացառիկ խիզախություն, բյուրեղյա ազնվություն. Իվ նրա բնավորության այդ գծերն, անվերապահորեն, նպաստում էին նոր, պրոլետարական տիպի ականավոր զորահրամանատարի հատկանիշների ձևավորմանը»[16]։ 1928 թ. մայիսի 18-ին լրացրած իր մի անձնական հարցաթերթիկի «Ինչի կարիք եք զգում» հարցին նա պատասխանում է. «Չխրում եմ առանց հին բոլշևիկների հետ ընկերական շփումներ ունենալու»[17]։

Գայի կյանքի թելը կտրվեց 1937 թ., երբ դեռ նոր էր բոլորել նրա 50 տարին։

Հայկ Դմիտրիի Բժշկյանը անցել է փառահեղ ուղի՝ շարքային զինվորից մինչև ճակատի հրամանատարի և ռազմական ակադեմիայի պրոֆեսորի պաշտոնը։ Սովետական ժողովուրդը իր հարգանքի և երախտագիտության տուրքն է տալիս քաղաքացիական կռիվների լեգենդար զորավար Գային, որի անունը ոսկե տառերով է գրված մեր հայրենիքի պատմության դյուցազնագրքում։

---

15 Նույն տեղում, թ. 8։

16 «Комсомольская правда», 7 փետրվարի 1967 թ.։

17 ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 124, ցուց. 1, գ. 429, թ. 12։